



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ՈՐՈՇՈՒՄ

” 09 ” հուլիս 2011 թ.

թիվ 37-Ա

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2011 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ
ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՅՆ ԱՆՁԱՆՑ, ՈՒՄ ԴԺՎԱՐ Է ՏԱՆԸ ԳՏՆԵԼ »
ՁԵՎԱԹՈՒՂԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Մարդահամարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդը որոշում է.

Հաստատել «Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականին անցկացվելիք մարդահամարի ընթացքում գրություն այն անձանց, ում դժվար է տանը գտնել» ձևաթուղթը՝ համաձայն հավելվածի:



Հարգելի ՀՀ քաղաքացի

Ձեր բնակավայրում տեղակայված N^o _____ հաշվային տեղամասի հաշվարար

- ին

իր այցելությունների ընթացքում չհաջողվեց հանդիպել Ձեր տնային տնտեսության անդամներից որևէ մեկին և Ձեր տնային տնտեսության համար լրացնել մարդահամարի հարցաթերթ:

Որպեսզի Ձեր տնային տնտեսությունը ՀՀ 2011թ. մարդահամարի հաշվառումից դուրս չմնա, **խնդրվում է** ըստ հնարավորության, այցելել տեղամաս՝ մինչև հոկտեմբերի 21-ը ներառյալ, ցանկացած օր՝ ժամը 8⁰⁰-ից 20⁰⁰ կամ զանգահարել տեղամաս հետևյալ հեռախոսահամարով՝ _____

Եթե նշված խնդրանքը հնարավոր չէ կատարել, ապա խնդրում ենք սույն գրության հակառակ կողմում նշեք, թե երբ է հնարավոր հանդիպել Ձեզ՝ մարդահամարի հարցաթերթը լրացնելու համար և սույն գրությունը Ձեզ հարմար ցանկացած ժամի փոխանցեք հրահանգչական տեղամաս: Այն փակ լինելու դեպքում, գրությունը կարող էք գցել հրահանգչական տեղամասի մուտքի մոտ գտնվող արկղը, իսկ արկղ չլինելու դեպքում՝ այն ներս հրեք մուտքի դռնից:

Հրահանգչական տեղամասը տեղակայված է հետևյալ հասցեում՝ _____

« _____ » _____ 2011թ.

Հաշվարար՝ _____

/ստորագրություն/

ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻՆ ԱԶԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ
